ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վայոց ձոր մարզի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ

- **2023 թվականին մարզում կատարված ցանքերը**

Ընդամենը ցանքեր 2889.2հա

որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն - 1016հա

բանջար բոստանային մշակաբույսեր - 233.5հա

կարտոֆիլ - 86.3 հա

կերային մշակաբույսեր - 1541.9 հա

տեխնիկական մշակաբույսեր - 11.5 հա

- **Կառավարության** 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1313-L որոշմամբ հաստատված <<ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում և բնակավայրերում 262 շահառու կատարել է 319.3 հա աշնանացան ցորենի ցանք, որից 125.7հա հավաստագրված սերմերով, 193.6 հա չհավաստագրված սերմերով: Կառավարության կողմից ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է 28 638 524 դրամ:

Ծրագրով սահմանված կարգով վարչության մասնագետների կողմից իրականցվել է աշնանացան ցորենի 40.1 տոկոս ցանքատարածությունների ընտրանքային մոնիթորինգ:

Վարչության կողմից տեղերում ուսումնասիրվել և գնահատվել է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը հասցված վնասները.

- ցրտահարություն - գրանցվել է Վայք համայնքի Գոմք, Արին, Զեդեա բնակավայրերի 35 հա պտղատու այգիներում, վնասի չափը կազմել է 56մլն դրամ:
- Կարկտահարություն- կարկտահարվել են Վայք համայնքի Հերհեր բնակավայրի պտղատու այգիները և բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները 51.3 հա, վնասի չափը կազմել է 202.3 մլն. դրամ:

- Վայրի և գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից մարզի Արենի, Եղեգնաձոր, Վայք, Եղեգիս, համայնքների բնակավայրերում առ 30.06.2022թ հասցվել է 4.79 մլն. դրամի վնաս:
- **2023 թվականի** հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված անասնագլխաքանակը.

Խոշոր եղջերավոր կենդանիներ - 16402գլուխ
որից կովեր - 6796 գլուխ
մանր եղջերավոր կենդանիներ - 15341 գլուխ
խոզեր - 2528 գլուխ
մեղվաընտանիքներ - 22490 փեթակ

- **Վարչության** անմիջական վերահսկողությամբ անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը՝

Բրուցելյոզ խ.ե.կ - 7612գլուխ,
բրուցելյոզ մ.ե.կ - 10541 գլուխ
դաբաղ խ.ե.կ - 21169 գլուխ
դաբաղ մ.ե.կ - 1956 գլուխ
սիբիրախտ խ.ե.կ - 20422 գլուխ
Էմկար - 14153 գլուխ
սիբիրախտ ձիերի - 707 գլուխ.
լեյկոզ խ.ե.կ - 141 գլուխ.

- **Վարչության կողմից** 24 ժամյա ռեժիմով աշխատանքներ են տարվում գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար:

Ոռոգման սեզոնի սկզբից սկսած <<Եղեգնաձոր>> ՋՕ-ի կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 3.2մլն մ^3 ոռոգման ջուր, հասույթը կազմել է 35.2մլն դրամ, գանձվել է 22.9մլն դրամ;

- Բույսերի պաշտպանության ծրագրով մարզին անվճար տրամադրված 9.84լ <<Բրոմոցիդ-ֆլյուիդ>> տեսակի մկնասպան թունանյութը բաշխվել է մարզի Եղեգնաձոր և Արենի համայնքներին՝ 123 հեկտար վարակված վարելահողերի վրա կրծողների դեմ քիմիական պայքար կազմակերպելու համար:
- Վարչության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ կազմակերպվել է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի , <<Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման>> հիմնադրամի հետ համատեղ հանդիպում-
- քննարկում մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի վերաբերյալ:

- **Մարզպետի** աշխատակազմի դահլիճում կազմակերպվել է հանդիպում մարզպետի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնագետների, միս արտադրողների և իրացնող տնտեսվարողների հետ՝ մարզում հանդիպում՝ սպանդանոցի գործարկման վերաբերյալ

Բնապահպանություն

1.Քննարկվել է <<Վայոց Ձոր Ֆրուկտ>> ՍՊ ընկերության Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման>> հայտը և տրվել դրական դիրքորոշում:

2.Քննարկվել է <<Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Վայոց ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի 2023-2032թթ կառավարման պլանի՝ շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտը և տրվել դրական դիրքորոշում:

3. Քննարկվել է <<ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ>> ՍՊ ընկերության Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի <<Փալի>> տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման>> հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:

4. Քննարկվել է <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի կողմից Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Տարսայիճի թաղամասի փողոցների ջրա-գազա և էլեկտրամատակարարման, կոյուղու վերակառուցման <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման>> հայտը և տրվել դրական դիրքորոշում:

5.Քննարկվել է <<ԿՎԱՐՑԻՏ>> ՍՊԸ-ի Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման>> հայտը և տրվել դրական դիրքորոշում:

Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության

պետ՝ Գ. Մարգարյան